

Արձանագրություն N 159

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ-ի փետրվարի 2 -ի նիստի Օրակարգ

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ամբիոնների 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի քննարկման հարցը/զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Ֆակուլտետի անվանափոխման հանձնաժողովի ձևավորման հարցը/ զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
3. Թեկնածուական ատենախոսության թեմաների հաստատում /զեկ.՝ գիտ. քարտուղար, դոցենտ Խ. Գալստյան/:
4. 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի և հեռակա բաժնի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում/ զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
5. Ընթացիկ հարցեր. ա/ անվանական կրթաթոշակների ներկայացման հարցը, բ/ սոց. հարցումների արդյունքների քննարկման հարցը:

Խորհուրդը որոշեց.

1. Հանձնարարել ամբիոնների վարիչներին մինչև ա/թ մարտի 20-ը ֆակուլտետի գիտական խորհրդին ներկայացնել 2016-2020թթ. ամբիոնների զարգացման ռազմավարական ծրագիրը:
2. Ֆակուլտետի անվանափոխման հարցով ձևավորել հանձնաժողով հետևյալ կազմով՝ Գեղամ Պետրոսյան (դեկան), Աշոտ Ենգոյան (քաղ. գիտ. և տես. ամբիոնի վարիչ), Քարիկ Քեոյան (քաղ. գործ և ինստ. Ամբիոնի վարիչ), Վահրամ Պետրոսյան (միջ. հար. ամբիոնի վարիչ), Նուբար Զալբյան (Դիվ. ծառ. և մասն. հաղ. ամբիոնի վարիչ), Վահագն Ազյան (Հանրային կառ. ամբիոնի վարիչ), Էդգար Քալանթարյան (դեկանի տեղակալ), Արթուր Իսրայելյան (դեկանի տեղակալ), Ժակ Մանուկյան (դեկանի տեղակալ), Կարեն Նահապետյան (դեկանի տեղակալ), Մենուա Սողոմոնյան (ԵՊՀ գիտ. քարտուղար), Խաչիկ Գալստյան (Ֆակուլտետի գիտ. քարտուղար):
3. Ձոն Կիրակոսյանի անվան կրթաթոշակի ներկայացնել Միջազգային հարաբերությունների բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Շուշաննա Ռոբերտի Թևանյանին, իսկ Ռուբեն Միրոյանի անվան կրթաթոշակի՝ Հանրային կառավարման բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Տիգրանի Տիգրանյանին:

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի դեկան, Գիտական խորհրդի
նախագահ, պրոֆ.**

Գ. Պետրոսյան

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
Ֆակուլտետի Գիտական խորհրդի քարտուղար, դոց.**

Խ. Գալստյան